



Համարը N 1110-Ն

Տեսակը Պաշտոնական
Ինկորպորացիա

Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2003.10.01/49(284)
Հոդ. 888

Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 11.10.2003

Ընդունման ամսաթիվը 14.08.2003
Ստորագրման ամսաթիվը 08.09.2003
Վավերացման ամսաթիվը 16.09.2003
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում էմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
16 սեպտեմբերի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2003 թվականի N 1110-Ն

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ և 121-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետերի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ պետական սեփականություն հանդիսացող կեղտաջրերի մաքրման կայանների համար սույն կարգը կիրառվում է 2012 թվականի հունվարի 1-ից:
(2-րդ կետը փոփ. 26.11.09 N 1416-Ն)
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2003 թ. սեպտեմբերի 8
Երևան

Կ Ա Ր Գ

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

(1-ին կետը խմբ. 05.09.19 N 1176-Ն)

2. Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցությունը կախված է աղտոտող նյութերի քանակությունից, վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մակարդակից և դրանց ազդեցության ժամանակահատվածից, ինչպես նաև ջրային ռեսուրսի օգտագործման ծավալից:

(2-րդ կետը փոփ., լրաց. 05.09.19 N 1176-Ն)

3. Սույն կարգի իմաստով

1) աղտոտող նյութերի քանակությունը՝ ջրային ռեսուրս աղտոտող նյութերի արտահոսքի քանակությունն է.

2) վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մակարդակը՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված՝ արտահոսքում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային քանակությունն է.

3) ջրային ռեսուրսի օգտագործման ծավալը (ջրառի ծավալը)՝ առանց ջրօգտագործման թույլտվության և (կամ) ջրօգտագործման թույլտվությունից ավելի և (կամ) անտնտեսվար և (կամ) ոչ նպատակային ջրառի ծավալն է.

4) ջրի անտնտեսվար օգտագործումը ջրային ռեսուրսների հյուծում կամ ջրապահպան ռեժիմի խախտում առաջացնող, ջրերի ստանդարտների և (կամ) ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտմամբ (կատարումը չսպասվող) ջրառի իրականացումն է.

5) ազդեցության ժամանակահատվածը՝ աղտոտող նյութերի քանակի, վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մակարդակի կամ ջրային ռեսուրսի օգտագործման ծավալի սկզբից մինչև ավարտն ընկած ազդեցության ժամանակահատվածն է:

(3-րդ կետը խմբ. 05.09.19 N 1176-Ն)

4. Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցությունը լինում է 2 տեսակի՝ ուղղակի ազդեցություն, որը պայմանավորված է դեպի ջրային ռեսուրս վնասակար նյութերի անմիջապես արտահոսքով կամ ջրային ռեսուրսի օգտագործման ծավալով, և անուղղակի՝ պայմանավորված դեպի ջրային ռեսուրս մաքրման կայանների սարքավորումների խափանմամբ և անարդյունավետ աշխատանքի հետևանքով վնասակար նյութերի արտահոսքով:

(4-րդ կետը լրաց. 05.09.19 N 1176-Ն)

5. Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հիմքում ընկած են աղտոտող նյութերի ուղղակի կամ անուղղակի ներգործությունը, աղտոտող նյութերի քանակությունը, վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մակարդակը, ազդեցության ժամանակահատվածը, վնասակար նյութերի ազդեցության կանխարգելման և վերացման ծախսերը, ինչպես նաև ջրային ռեսուրսի օգտագործման ծավալը:

(5-րդ կետը խմբ. 05.09.19 N 1176-Ն)

6. Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատումը ներառում է շրջակա միջավայրի աղտոտվածության հետևանքով արտադրանքի քանակական ու որակական կորուստների փոխհատուցման, ջրային ռեսուրսի օգտագործված ծավալով պայմանավորված՝ աղտոտված և (կամ) հյուծված ջրային ռեսուրսի վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծառայությունների, աղտոտման հետևանքով բնակչության առողջության վերականգնման և աշխատանքի արտադրողականության նվազեցման հետևանքով (այդ թվում՝ աշխատանքից բացակայության) աշխատանքի վերականգնման, հիմնական ֆոնդերի վրա աղտոտման ազդեցության հետևանքով արդյունաբերական արտադրանքի կորստի վերականգնման փոխհատուցման ծախսերը:

(6-րդ կետը խմբ. 05.09.19 N 1176-Ն)

7. Այն դեպքում, երբ ջրային ռեսուրսների աղտոտվածությունը հանգեցնում է ջրի՝ խմելու կամ տնտեսական ջրամատակարարման համար օգտագործման անհնարինությունը, այլ ջրային աղբյուրների օգտագործմանն անցնելու անհրաժեշտությանը և այլ տեխնիկական միջոցառումների իրականացմանը, որոնք անհրաժեշտ են բնակչությանը համապատասխան որակի ջրով ապահովելու համար, ապա տնտեսական ազդեցությունը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$\Phi_{\Sigma} = (\Sigma_{\text{ու.}} + \Phi_{\text{կ.ն.}} \cdot \Psi_{\text{ու.}}) - (\Sigma_{\text{տ.}} + \Phi_{\text{կ.ն.}} \cdot \Psi_{\text{տ.}}) \quad (0),$$

որտեղ՝

Վ_ջ-ն այլընտրանքային ջրաղբյուրից բնակչությանը համապատասխան որակի ջրով ապահովելու համար պահանջվող ծախսն է,

Շ_Ա-ն և Մ_Ա-ն շահագործման ու կապիտալ ծախսերն են՝ ըստ սարքավորումների, որոնք անհրաժեշտ են աղտոտված ջրաղբյուրի դեպքում բնակչությանը համապատասխան որակի ջրով ապահովելու համար,

Շ_Բ-ն և Մ_Բ-ն շահագործման ու կապիտալ ծախսերն են՝ ըստ սարքավորումների, որոնք անհրաժեշտ են բնակչությանն ընդունված նորմաներին համապատասխանող որակ ունեցող ջրաղբյուրից համապատասխան որակի ջրով ապահովելու համար,

Գ_{վ.ն}-ն կապիտալ ներդրումների արդյունավետության նորմատիվային գործակիցն է:

8. Ջրային օրենսդրության պահանջների խախտմամբ իրականացվող աղտոտող նյութերի համազարկային և հաստատագրված արտահոսքերի դեպքում կատարվում է տնտեսական ազդեցության գնահատում: Համազարկային է այն արտահոսքը, երբ վնասակար նյութերը 100 և ավելի անգամ գերազանցում են թույլատրելի սահմանային նորմաները: Մնացած բոլոր դեպքերում արտահոսքը հաստատագրված է:

Աղտոտող նյութերի համազարկային արտահոսքի դեպքում տնտեսական ազդեցության գնահատումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Վ_{ւ}^a = Q_{ւ}^a \cdot \Psi_{ւ} \tag{1}$$

իսկ հաստատագրված արտահոսքի դեպքում՝

$$Վ_{ւ}^b = Q_{ւ}^b \cdot \Psi_{ւ} \tag{2}$$

որտեղ՝

մ-ն աղտոտող նյութի տեսակն է,

Վ_ւ^ա-ն ջրային ռեսուրսներին աղտոտվածության հետևանքով հասցված վնասի չափն է՝ մ-րդ աղտոտող նյութի համազարկային արտահոսքի դեպքում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը,

Վ_ւ^բ-ն ջրային ռեսուրսներին աղտոտվածության հետևանքով հասցված վնասի չափն է՝ մ-րդ աղտոտող նյութի հաստատագրված արտահոսքի դեպքում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը,

Q_ւ^ա-ն ջրային ռեսուրսներին աղտոտվածության հետևանքով հասցված վնասի չափն է՝ մ-րդ աղտոտող նյութի համազարկային արտահոսքի դեպքում,

Q_ւ^բ-ն ջրային ռեսուրսին աղտոտվածության հետևանքով հասցված վնասի չափն է՝ մ-րդ աղտոտող նյութի հաստատագրված արտահոսքի դեպքում,

Q_ւ^ա-ն և Q_ւ^բ-ն մեծություններ են, որոնք ընդունում են արժեքներ՝ կախված արտահոսող նյութի քանակությունից,

Ψ_ւ-ն ջրային ռեսուրսի կարգով պայմանավորված գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

9. Ջրային ռեսուրսների աղտոտվածության հետևանքով տնտեսական ազդեցության գնահատումը կախված է ոչ միայն աղտոտող նյութի քանակությունից, այլև դրա՝ ջրում գտնվելու ժամանակահատվածից: Աղտոտվածության հետևանքների վերացման աշխատանքների իրականացման դեպքում վնասի հաշվարկները կատարվում են հետևյալ բանաձևերով՝

$$U_{ւ}^a = U_{ւ}^a (1 - \sum_{i} (U_{i}/100) \cdot \Psi^i) \tag{3}$$

$$U_{ւ}^b = U_{ւ}^b (1 - \sum_{i} (U_{i}/100) \cdot \Psi^i) \tag{4}$$

որտեղ՝

U_ւ^ա-ն աղտոտվածության հետևանքների վերացման աշխատանքների իրականացման դեպքում վնասի չափն է՝ մ-րդ նյութի համազարկային արտահոսքի դեպքում,

U_ւ^բ-ն աղտոտվածության հետևանքների վերացման աշխատանքների իրականացման դեպքում վնասի չափն է՝ մ-րդ նյութի հաստատագրված արտահոսքի դեպքում,

U_ւ^ա-ն և U_ւ^բ-ն վնասի հատուցման չափերն են՝ միջոցներ չձեռնարկվելու դեպքում,

^ն-ն աղտոտող նյութերի հավաքման յուրաքանչյուր ժամանակահատվածն է,

Պ_ւ-ն և U_ւ-ն համապատասխանաբար աղտոտող նյութի հավաքված քանակությունը և տոկոսն է ամեն մ-րդ ժամանակահատվածում՝ հաստատված համապատասխան փաստաթղթերով (ջրօգտագործողի կողմից աղտոտող նյութերի սկզբնական հաշվառման մատյան):

$$U_{ւ}^a = \frac{\eta_{ւ} \cdot 100}{U_{ւ}} \% \tag{5}$$

որտեղ՝

Պ_Լ-ն մ-րդ աղտոտող նյութի քանակությունն է աղտոտման ամբողջ ժամանակահատվածում,

Կ^ս-ն վնասի չափի նվազեցման գործակիցն է՝ աղտոտվածության հետևանքների վերացման համար միջոցներ ձեռնարկվելու դեպքում, որը որոշվում է համաձայն N 2 աղյուսակի (կախված արտահոսքի ավարտման և ջրի աղտոտման վերացման աշխատանքների ավարտման ժամկետների տարբերությունից):

10. Ջրային ռեսուրսների աղտոտվածության հետևանքով տնտեսական ազդեցության գնահատման համար աղտոտող նյութի քանակությունը որոշելու նպատակով, ջրային օրենսդրության պահանջների խախտման փաստի բացահայտման դեպքում, որը հանգեցրել է ջրավազանի աղտոտման, անհրաժեշտ են տեղեկություններ՝

- ա) ջրային ավազանում ջրի որակի մասին մինչև դրա աղտոտումը,
- բ) ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության մեջ նշված աղտոտող նյութերի նորմատիվ քանակների մասին՝ արտահոսքի թափման տեղում ու դիտարկման կետում,
- գ) գոյություն ունեցող աղտոտող նյութերի փաստացի քանակների մասին՝ արտահոսքերում, թափման տեղերում և դիտարկման կետերում,
- դ) ջրային ավազաններում ջրի որակի մասին՝ արտահոսքերի թափման տեղերում ըստ սովյալ օրինագանցի արտահոսքերը բնորոշող նյութերի,
- ե) ջրային ավազան թափվող, բարձր աղտոտվածությամբ կեղտաջրերի քանակության մասին,
- զ) ջրային ավազան թափվող, բարձր աղտոտվածությամբ կեղտաջրի արտահոսքի տևողության մասին,
- է) համազարկային արտահոսքերի դեպքում աղտոտող նյութերի արտահոսքի տևողության մասին:

Համազարկային արտահոսքի դեպքում վնասակար նյութերի քանակությունը որոշվում է օրինագանց ջրօգտագործողների ստուգմամբ և հետազոտությամբ՝ բնորոշող հետևյալ տվյալների հիման վրա՝ տեխնոլոգիական տարողություններից և խողովակաշարից կատարված արտահոսքի տևողությունն ու քանակությունը,

ջրային ավազան խտացված նյութերի, ռեազենտների, հումքանյութերի նստվածքների թափումը և նախնական անբավարար մաքրման վթարային արտահոսքերը:

Համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում աղտոտող նյութերի քանակությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P_L = P_{\text{L}} \cdot (K_{\text{L}}^{\text{L}} - K_{\text{L}}^{\text{L}}) \cdot \theta^L \cdot 10^{-6} \quad (6),$$

որտեղ՝

$$K_{\text{L}}^{\text{L}} > K_{\text{L}}^{\text{L}},$$

Պ_Լ-ն վնասի հաշվարկի դեպքում կիրառվող մ-րդ աղտոտող նյութի քանակությունն է արտահոսքում (տ-ով),

մ-ն աղտոտող նյութի տեսակն է,

Ք-ն կեղտաջրի այն քանակն է, որի մեջ աղտոտող նյութը գերազանցել է թույլատրելի սահմանային քանակությունը,

Կ^ս_{փաստ}-ն վերահսկման կետում մ-րդ աղտոտող նյութի միջին փաստացի խտությունն է աղտոտման ժամանակահատվածում, մգ/լ (գ/մ³),

Կ^ս_{թույլ}-ն վերահսկման կետում մ-րդ աղտոտող նյութի թույլատրելի խտությունն է՝ ըստ ջրօգտագործման թույլատրելի պայմանների, մգ/լ (գ/մ³),

θ^L-ն մ-րդ աղտոտող նյութի արտահոսքի ժամանակահատվածն է՝ սկսած աղտոտման սկզբից մինչև նրա վերացման վերջը (ժամ):

մ-րդ նյութի փաստացի խտությունը հաստատող անալիտիկ տվյալների բացակայության դեպքում այն ընդունվում է կեղտաջրերի կարգին բնորոշ տվյալ նյութի համար նորմատիվ փաստաթղթերում ընդունված խտության մեծությունը:

11. Օրգանական նյութերով ջրային ռեսուրսների աղտոտվածության տնտեսական ազդեցության գնահատումը (ըստ թթվածնի կենսաբանական պահանջի (թկպ), հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$C_{\text{թկպ}}^{\text{a}} = Q_{\text{թկպ}}^{\text{a}} \cdot C_{\text{L}} \quad (7),$$

կամ

$$C_{\text{թկպ}}^{\text{h}} = Q_{\text{թկպ}}^{\text{h}} \cdot C_{\text{L}} \quad (8),$$

որտեղ՝

Կ^ա_{թկպ}-ն և Կ^հ_{թկպ}-ն օրգանական նյութերով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը,

Q^ա_{թկպ}-ն և Q^հ_{թկպ}-ն օրգանական նյութերով ջրային ռեսուրսներին հասցված վնասի հատուցման չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում (հազ. դրամ): Q^ա_{թկպ}-ն որոշվում է համաձայն սույն կարգի N 4 աղյուսակի, Q^հ_{թկպ}-ն՝ համաձայն սույն կարգի N 5 աղյուսակի:

Կ_Լ-ն ջրային ռեսուրսի կարգով պայմանավորված գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

Եթե ջրային ռեսուրսն աղտոտվում է մի քանի օրգանական նյութերով, ապա յուրաքանչյուր օրգանական նյութի քանակությունը, ըստ թկպ-ի համապատասխան մեծության, որոշվում է համաձայն սույն կարգի N 3 աղյուսակի և 9-րդ բանաձևի՝

$$U_{թկպ} = I_{թոթգ} \cdot \eta_{թկպ} \tag{9}$$

որտեղ՝

$I_{թոթգ}$ -ն օրգանական նյութի խտությունն է (մգ/լ),

$\eta_{թկպ}$ -ն $I_{թոթգ}$ -ից թկպ անցնելու վերահաշվարկման համապատասխան գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 3 աղյուսակի:

12. Ջրային ռեսուրսների՝ կախյալ նյութերով պայմանավորված աղտոտվածության տնտեսական ազդեցության գնահատումը, հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{գ.գ.} = Q_{գ.գ.} \cdot U_{գ} \tag{10}$$

կամ

$$V_{գ.գ.}^h = Q_{գ.գ.}^h \cdot U_{գ} \tag{11}$$

որտեղ՝

$V_{գ.գ.}$ -ն և $V_{գ.գ.}^h$ -ն կախյալ նյութերով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը (հազ. դրամ),

$Q_{գ.գ.}$ -ն և $Q_{գ.գ.}^h$ -ն կախյալ նյութերով ջրային ռեսուրսներին հասցված վնասի հատուցման չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում (հազ. դրամ): $Q_{գ.գ.}$ -ն որոշվում է համաձայն սույն կարգի N 6 աղյուսակի, իսկ $Q_{գ.գ.}^h$ -ն՝ համաձայն սույն կարգի N 7 աղյուսակի,

$U_{գ}$ -ն ջրային ռեսուրսի կարգով պայմանավորված գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

13. Ջրային ռեսուրսների՝ նավթամթերքներով պայմանավորված աղտոտվածության տնտեսական ազդեցության գնահատումը, հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{նավթ} = Q_{նավթ} \cdot U_{գ} \tag{12}$$

կամ

$$V_{նավթ}^h = Q_{նավթ}^h \cdot U_{գ} \tag{13}$$

որտեղ՝

$V_{նավթ}$ -ն և $V_{նավթ}^h$ -ն նավթամթերքներով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը (հազ. դրամ),

$Q_{նավթ}$ -ն և $Q_{նավթ}^h$ -ն նավթամթերքներով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում (հազ. դրամ), որոնց մեծությունները ներկայացված են սույն կարգի NN 8 և 9 աղյուսակներում,

$U_{գ}$ -ն ջրային ռեսուրսի կարգով պայմանավորված գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

14. Ջրավազան թափվող ծանր մետաղների՝ ցիան, քրոմ(VI), պղինձ, ցինկ, ֆտորիդներ, աղերի քանակությունը՝ η -ն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\eta = \rho (U_{\psiաստ} - U_{թույլ}) \cdot \sigma \cdot 10^3 \tag{14}$$

որտեղ՝

η -ն ցիան, պղինձ, քրոմ(VI), ցինկ, ֆտորիդներ պարունակող ծանր մետաղների աղերի քանակությունն է՝ կգ-էկվ, $U_{\psiաստ}$ -ն վերահսկման կետում ցինկ, ցիան, պղինձ, քրոմ(VI), ֆտորիդներ պարունակող ծանր մետաղների աղերի միջին փաստացի խտությունն է՝ աղտոտման ժամանակահատվածում՝ կգ-էկվ/լ,

$U_{թույլ}$ -ն վերահսկման կետում ցինկ, ցիան, պղինձ, քրոմ(VI), ֆտորիդներ պարունակող ծանր մետաղների աղերի թույլատրելի խտությունն է՝ ըստ ջրօգտագործման թույլատրելի պայմանների՝ կգ-էկվ/լ,

ρ -ն ցիան, պղինձ, քրոմ(VI), ցինկ, ֆտորիդներ պարունակող ծանր մետաղների աղերի պարունակությունը գերազանցող կեղտաջրի քանակությունն է՝ (մ³/ժամ),

σ -ն նշված աղտոտող նյութերի պարունակությունը գերազանցող արտահոսքի տևողությունն է (ժամ):

Ցիան, պղինձ, քրոմ (VI), ցինկ, ֆտորիդներ պարունակող ծանր մետաղների աղտոտվածության հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական ազդեցության գնահատումը, հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը (ջրային ռեսուրսի կարգը որոշվում է ջրերի ստանդարտներով), որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{գ} = Q_{գ} \cdot U_{գ} \tag{15}$$

կամ

$$V_{գ}^h = Q_{գ}^h \cdot U_{գ} \tag{16}$$

որտեղ՝

$V_{գ}$ -ն և $V_{գ}^h$ -ն ծանր մետաղների աղերի համազարկային կամ հաստատագրված արտահոսքերով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը,

Չ_ճ-ն և Չ^հ_ճ-ն ցիանի, պղնձի, քրոմի (VI), ցինկի, ֆտորիդների պարունակությամբ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ համաձայն սույն կարգի NN 10 և 11 աղյուսակների,

Վ_լ-ն ջրային ռեսուրսի կարգը որոշող գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

15. Ջրային ռեսուրսների՝ դետերգենտներով պայմանավորված աղտոտվածության տնտեսական ազդեցության գնահատումը, հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Վ^q_{\eta} = \mathcal{Q}^q_{\eta} \cdot \mathcal{V}_{\eta} \tag{17}$$

կամ

$$\mathcal{V}^h_{\eta} = \mathcal{Q}^h_{\eta} \cdot \mathcal{V}_{\eta} \tag{18),}$$

որտեղ՝

Վ^q_η-ն և Վ^h_η-ն դետերգենտներով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը (հազ. դրամ),

Չ^q_ճ-ն և Չ^h_ճ-ն դետերգենտներով ջրային ռեսուրսներին հասցված վնասի հատուցման չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում (հազ. դրամ), որոնք նախատեսված են սույն կարգի NN 12 և 13 աղյուսակներում,

Վ_լ-ն ջրային ռեսուրսի կարգով պայմանավորված գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

16. Մելիորատիվ տարածքներից թունաքիմիկատների արտահոսքի պատճառով ջրային ռեսուրսների աղտոտվածության տնտեսական ազդեցության գնահատումը, հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{V}^q_{\rho} = \mathcal{Q}^q_{\rho} \cdot \mathcal{V}_{\eta} \tag{19}$$

կամ

$$\mathcal{V}^h_{\rho} = \mathcal{Q}^h_{\rho} \cdot \mathcal{V}_{\eta} \tag{20),}$$

որտեղ՝

Վ^q_ρ-ն և Վ^h_ρ-ն թունաքիմիկատներով ջրային ռեսուրսներին հասցված վնասի չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքերի դեպքում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսի կարգը (հազ. դրամ),

Չ^q_ճ-ն և Չ^h_ճ-ն թունաքիմիկատներով ջրային ռեսուրսներին հասցված վնասի հատուցման չափն է՝ համազարկային կամ հաստատագրված արտահոսքի դեպքում (հազ. դրամ), որոնք ներկայացված են սույն կարգի NN 14 և 15 աղյուսակներում,

Վ_լ-ն ջրային ռեսուրսի կարգով պայմանավորված գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

17. Աղբով ջրային ռեսուրսների աղտոտման դեպքում տնտեսական ազդեցության գնահատումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{V}_{\text{աղբ}} = \mathcal{Q}_{\text{աղբ}} \cdot \mathcal{V}_{\eta} \tag{21),}$$

որտեղ՝

Վ_{աղբ}-ն ջրային ռեսուրսի աղտոտման ընդհանուր վնասի չափն է (հազ. դրամ),

Չ_{աղբ}-ն աղբով ջրային ռեսուրսի աղտոտման վնասի չափն է, որը որոշվում է 22-րդ բանաձևով,

Վ_լ-ն ջրային ռեսուրսի կարգով պայմանավորված գործակիցն է՝ համաձայն սույն կարգի N 1 աղյուսակի:

Աղբով ջրային ռեսուրսի աղտոտման չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{Q}_{\text{աղբ}} = S \cdot F \cdot U \cdot 10^{-3} \tag{22),}$$

որտեղ՝

Չ_{աղբ}-ն աղբով ջրային ռեսուրսի աղտոտման վնասի չափն է (հազ. դրամ),

S-ն լողացող աղբի հավաքման արժեքն է՝ միջին հաշվով,

$$S=0.03 \text{ դրամ/մ}^2,$$

U-ն աղբով աղտոտված ջրային մակերեսն է՝ մ²,

F-ն բալային մեծությունն է, որը բնորոշում է աղտոտվածության աստիճանը՝ համաձայն սույն կարգի N 16 աղյուսակի:

18. Միաժամանակ մի քանի նյութերով ջրային ռեսուրսի աղտոտման դեպքում տնտեսական ազդեցության գնահատումը հաշվվում է յուրաքանչյուր նյութի համար առանձին՝ վերցնելով դրանց առավելագույն չափը և գումարելով մնացած նյութերով հասցված վնասի գումարային արժեքները՝ այնուհետև բազմապատկելով 0.15 գործակցով:

19. Ջրի անտնտեսվար և (կամ) ոչ նպատակային և (կամ) առանց ջրօգտագործման թույլտվության և (կամ) ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական ազդեցության գնահատման հաշվարկներում 1 խոր. մետր ստորերկրյա ջրի արժեքն է 9 դրամ, իսկ 1 խոր. մետր մակերևութային ջրի արժեքը՝ 2 դրամ:

(պարբերությունը հանվել է 05.09.19 N 1176-Ն)

(19-րդ կետը խմբ. 26.11.09 N 1416-Ն, 10.07.13 N 768-Ն, փոփ. 05.09.19 N 1176-Ն)

19.1. Ջրի անտնտեսվար, ոչ նպատակային, առանց ջրօգտագործման թույլտվության կամ ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական ազդեցության գնահատման հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{\text{ՋՐ}} = \text{Օ} \times U_{\text{գ}}, \text{ որտեղ՝}$$

« $V_{\text{ՋՐ}}$ »-ն ջրի անտնտեսվար, ոչ նպատակային, առանց ջրօգտագործման թույլտվության կամ ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով շրջակա միջավայրին (պետությանը) պատճառված վնասն է,

«Օ»-ն ջրի անտնտեսվար, ոչ նպատակային, առանց ջրօգտագործման թույլտվության կամ ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով օգտագործված ջրի ծավալն է՝ արտահայտված խորանարդ մետրով,

« $U_{\text{գ}}$ »-ն ջրի անտնտեսվար, ոչ նպատակային, առանց ջրօգտագործման թույլտվության կամ ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական ազդեցության գնահատման հաշվարկներում կիրառվող 1 խորանարդ մետր ստորերկրյա կամ մակերևութային ջրի 1 խորանարդ մետրի համար սույն կարգի 19-րդ կետով սահմանված արժեքն է:

(19.1-ին կետը լրաց. 05.09.19 N 1176-Ն)

20. Սույն կարգը կիրառվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրության իրավախախտումների հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնասները հաշվարկելու համար.

բ) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախագծերի տեխնիկատնտեսական հաշվարկների նպատակով:

(20-րդ կետը խմբ. 26.11.09 N 1416-Ն, 10.07.13 N 768-Ն)

21. Սույն կարգում օգտագործվող հապավումներն են՝

- փաստ՝ փաստացի,
- թույլ՝ թույլատրելի,
- թկա՝ թթվածնի կենսաբանական պահանջ,
- օրգ՝ օրգանական նյութ,
- կ.մ.՝ կախյալ մասնիկներով աղտոտում,
- նավթ՝ նավթամթերքներով աղտոտում,
- թ.՝ թունաքիմիկատներով աղտոտում,
- աղբ՝ աղբով աղտոտում,
- դ.՝ դետերգենտներով աղտոտում,
- ծ.՝ ծանր մետաղներով աղտոտում,
- կ.ն.՝ կապիտալ ներդրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Աղյուսակ N 1

**ՀՈՍՔԱԶՐԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՐԳԵՐՈՒՄ ՀԱՇՎԻ ԱՌՆՎՈՂ
ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ջրային ռեսուրսների տեսակները	$V_{\text{գ}}$
Ոչ ձկնատնտեսային կարգի ջրային ռեսուրսներ	1.0
Ձկնատնտեսական կարգի ջրային ռեսուրսների և ջրավազաններ, որոնք օգտագործվում են խմելու, ջրամատակարարման, ինչպես նաև սննդարդյունաբերության ջրամատակարարման համար	1.1
Այլ ջրային ռեսուրսներ	0.8
Ջրային ռեսուրսների ջրհավաք ավազաններ (երբ կեղտաջրերի արտահոսքն իրականացվում է ոչ անմիջապես ջրային ռեսուրսում)	0.5
Սևանա լիճ և այլ պահպանվող ջրային ռեսուրսներ	3.0

Մտորերկրյա ջրեր	1.5
-----------------	-----

Աղյուսակ N 2

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՂՏՈՏՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ՝ ԿԱԽՎԱԾ ԱՅԴ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻՑ

Ջրային ռեսուրսների աղտոտման վերացման ժամանակը (ժ)	Վնասի մեծության նվազեցման գործակիցը (Կն)
Մինչև 6-ը ներառյալ	0.800
6-ից ավելի մինչև 12-ը ներառյալ	0.650
12-ից ավելի մինչև 18-ը ներառյալ	0.500
18-ից ավելի մինչև 24-ը ներառյալ	0.463
24-ից ավելի մինչև 30-ը ներառյալ	0.434
30-ից ավելի մինչև 36-ը ներառյալ	0.412
36-ից ավելի մինչև 48-ը ներառյալ	0.388
48-ից ավելի մինչև 60-ը ներառյալ	0.364
60-ից ավելի մինչև 72-ը ներառյալ	0.346
72-ից ավելի մինչև 84-ը ներառյալ	0.331
84-ից ավելի մինչև 96-ը ներառյալ	0.320
96-ից ավելի մինչև 108-ը ներառյալ	0.301
108-ից ավելի մինչև 120-ը ներառյալ	0.293
120-ից ավելի մինչև 132-ը ներառյալ	0.287
132-ից ավելի մինչև 144-ը ներառյալ	0.280
144-ից ավելի մինչև 156-ը ներառյալ	0.275
156-ից ավելի մինչև 168-ը ներառյալ	0.270
168-ից ավելի մինչև 180-ը ներառյալ	0.266
180-ից ավելի մինչև 192-ը ներառյալ	0.262
192-ից ավելի մինչև 204-ը ներառյալ	0.296
204-ից ավելի մինչև 216-ը ներառյալ	0.258
216-ից ավելի մինչև 228-ը ներառյալ	0.254
228-ից ավելի մինչև 240-ը ներառյալ	0.250

Ջրերի աղտոտումը վերացնելու ժամանակը (ժ) հաշվարկվում է, որպես արտահոսքի ավարտման և ջրի աղտոտումը վերացնելու աշխատանքների ավարտման ժամկետների տարբերություն:

Աղյուսակ N 3

ԹԿՊ_{ԼՐԻՎ}-ՈՒՄ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԽՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Նյութերը	ԹԿՊ _{ԼՐԻՎ} -ում օրգանական նյութերի խտության հաշվարկման գործակիցը (Պ _{թվ})
Սպիրտներ	
ալիլ	1.5
բութիլ	1.45
մեթիլ	0.98
H-օակտիլային	1.2
էթիլ	1.82
գլիցերին	0.86
էթիլ-քլորիդիդին	0.48
էթիլենդիամին	2.10

Եթերներ	
ացետոքացախային	1.5
քացախատթիլային	1.49
էթիլային	0.5
իզոբութիլացետատ	2.05
ֆորմալդեհիդ	0.75
ացետալդեհիդ	1.07
ալդեհիդ (կրտոնային)	2.1
ացետոն	1.68
ացետամիդ	1.87
ակրոլեին	0.52
Դի-2 էթիլ հեքսիլ (ֆենիլֆոսֆատ)	0.10
նիլֆոսֆատ	0.10
դիէթիլամին	1.31
Եռէթիլամին	0.05
իզոդինիտրիլ, իզոյուդային թթուներ	0.069
նավթաբենզոլ	0.162
դիէթիլենգլիկոլ	0.176
ասպարազին	1.63
իզոպրեն	0.55
դիմէթիլդիօքսան	0.45
մէթիլբուտադիոն	1.35
ցիկլիկ օքսանային սպիրտ	1.55
գլյուկոզներ	0.54
շաքար	0.49
գլիկոլ	1.29
լէյցին	2.06
մէթասակրիլալիդ	0.93
վինիլացետատ	1.00
դիմէթիլ Ֆորմանիդ	0.10
միզանյութ	2.13
բենզոլ	1.15
ստիրոլ	1.60
մէթիլ տիրոլ	1.56
Օ-ամինոֆենոլ	1.10
Օ-կրեոլ	1.45
ռեզորցին	1.56
պիրոկատէլսին	1.495
հիդրոհիոնալ	1.465
անիլին	0.458
բնէկնախեժային յուղ	1.90
եռկրիզիլֆոսֆատ	1.20
եռբուտիլֆոսֆատ	1.30
Դի-2 էթիլ հեքսիլ (ֆենիլֆոսֆատ)	0.10
նիլֆոսֆատ	0.10
դիէթիլամին	1.31
Եռէթիլամին	0.05
իզոդինիտրիլ, իզոյուդային թթուներ	0.069
նավթաբենզոլ	0.162
դիէթիլենգլիկոլ	0.176
ասպարազին	1.63
իզոպրեն	0.55
դիմէթիլդիօքսան	0.45
մէթիլբուտադիոն	1.35
ցիկլիկ օքսանային սպիրտ	1.55

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԵՐԻ ԱՂՏՈՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պթկայ տոննա	Զգթկայ հազ. դրամ	Պթկայ տոննա	Զգթկայ հազ. դրամ	Պթկայ տոննա	Զգթկայ հազ. դրամ
		5.0	295	350	16120
		6	351	400	18280
0.1	17	7.5	433	450	20450
0.11	17.5	9	514	500	22550
0.13	18.7	10	568	550	24700
0.16	20.2	11	621	600	26800
0.2	22.3	13	726	650	28900
0.25	25.3	16	885	700	31000
0.3	28	20	1090	750	33000
0.35	31.3	25	1344	800	35150
0.4	34.1	30	1600	900	39250
0.5	39.7	35	1847	1000	43300
0.6	45.6	45	2090	1100	47500
0.75	54.5	50	2575	1300	55500
0.9	63	60	3065	1500	65500
1	68.8	75	3770	1600	67500
1.1	75	90	4490	1800	75300
1.3	86	100	4960	2000	83250
1.6	103	110	5425	2500	102700
2	125	130	6350	3000	122000
2.5	154	160	7720	3500	141000
3	183	200	9525	4000	159700
3.5	211.5	250	11750	45000	178600
4	239	300	13960	5000	197000

Աղյուսակում չներառված Զգթկայ-ի միջանկյալ նշանակության որոշման համար կիրառել Զգթկայ-ին մոտիկ նշանակության միջև ինտերպոլացիան:

Եթե Պթկայ < 0,10 տ՝ վնասի մեծությունը որոշում ենք հետևյալ բանաձևով՝ (հազ. դր. Զգթկայ = 3400 (հազ. դ.) տ), Պթկայ (տ):
 Եթե Պթկայ > 5000 տ՝ վնասի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝ (հազ. դր. Զգթկայ = 788 (հազ. դ.) տ), Պթկայ (տ):

Աղյուսակ N 5

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԱՐՏԱՆԵՏՈՒՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ (Զհթկայ)

Պթկայ տոննա	Զհթկայ հազ. դրամ	Պթկայ տոննա	Զհթկայ հազ. դրամ	Պթկայ տոննա	Զհթկայ հազ. դրամ
0.1	4.7	3.5	12.68	110	75
0.11	4.83	4	13.16	130	86
0.13	5.06	5	14.01	160	103
0.16	5.36	6	14.74	200	125
0.2	5.7	7.5	15.69	250	154
0.25	6.07	9	16.5	300	183
0.3	6.39	10	17	350	211.5
0.35	6.67	11	17.5	400	239
0.4	6.92	13	18.7	500	295
0.5	7.37	16	20.2	600	351
0.6	7.75	20	22.3	750	433
0.75	8.25	25	25.3	900	514

0.9	8.66	30	28	1000	568
1	8.94	35	31.3	1100	621
1.1	9.18	40	34.1	1300	726
1.3	9.62	50	39.7	1600	885
1.6	10.2	60	45.6	2000	1090
2	10.85	75	54.5	2500	1344
2.5	11.55	90	63	3000	1600
3	12.15	100	68.8	3500	1847
				4000	2090
				5000	2575

Ջ^հ_{թկայ}-ի այն միջնակա արժեքների որոշման համար, որոնք ներառված չեն աղյուսակում, Ջ^հ_{թկայ}-ի մոտակա 2 արժեքների միջև կիրառել ինտերպոլացիա:

Պ_{թկայ} < 0.10 տ արժեքների դեպքում վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^հ_{թկայ} = 940.0 (հազ.դրամ/տ) · Պ_{թկայ} (տ):

Պ_{թկայ} > 5000 տ արժեքների դեպքում վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^հ_{թկայ} = 10.3 (հազ.դրամ/տ) · Պ_{թկայ} (տ):

Աղյուսակ N 6

ԿԱԽՅԱԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻՑ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _{կ.մ.} տոննա	Ջ ^զ _{կ.մ.} հազ. դրամ	Պ _{կ.մ.} տոննա	Ջ ^զ _{կ.մ.} հազ. դրամ	Պ _{կ.մ.} տոննա	Ջ ^զ _{կ.մ.} հազ. դրամ
		3.5	58.894	130	1638
0.1	8.308	4	65.82	160	2012.4
0.11	8.72	5	79.265	200	2510.5
0.13	9.553	6	92.265	250	3132
0.16	10.724	7.5	111.11	300	3752.4
0.2	12.13	9	122.33	350	4371.5
0.25	13.72	10	141.2	400	4990.4
0.3	15.172	11	152.86	500	6225.7
0.35	16.52	13	175.68	600	7458.9
0.4	17.784	16	214.75	750	9305.2
0.5	20.115	20	266.45	900	11160
0.6	22.246	25	330.6	1000	12400
0.75	25.162	30	394.32	1100	13640
0.9	27.828	35	457.69	1300	16120
1	29.493	40	520.8	1600	19.84
1.1	31.086	50	646.65	2000	24800
1.3	34.09	60	770.74	2500	31000
1.6	38.23	75	956.25	3000	37200
2	43.24	90	1140.6	3500	43400
2.5	48.911	100	1263	4000	49600
3	54.09	110	1388.2	5000	62000
3.5	58.894	130	1638		

Ջ^զ_{կ.մ.}-ի այն միջնակա արժեքների որոշման համար, որոնք ներառված չեն աղյուսակում, Ջ^զ_{կ.մ.} (Ջ^զ_{կ.մ.}) մոտակա 2 արժեքների միջև կիրառել գծային ինտերպոլացիա:

Պ_{կ.մ.} < 0.10 տ արժեքների դեպքում վնասի մեծությունը Ջ^զ_{կ.մ.} որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^զ_{կ.մ.} = 1661.6 (հազ.դրամ/տ) · Պ_{կ.մ.} (տ):

Պ_{կ.մ.} > 5000 տ արժեքների դեպքում վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^զ_{կ.մ.} = 248 (հազ.դրամ/տ) · Պ_{կ.մ.} (տ):

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱԽՅԱԼ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _{կ.մ.} տոննա	Ջ ^հ _{կ.մ.} հազ. դրամ	Պ _{կ.մ.} տոննա	Ջ ^հ _{կ.մ.} հազ. դրամ	Պ _{կ.մ.} տոննա	Ջ ^հ _{կ.մ.} հազ. դրամ
		3.5	4.872	130	34.09
0.1	0.8	4	5.215	160	38.23
0.11	0.84	5	5.841	200	43.24
0.13	0.918	6	6.408	250	48.911
0.16	1.016	7.5	7.178	300	54.09
0.2	1.138	9	7.874	350	58.894
0.25	1.276	10	8.308	400	65.82
0.3	1.398	11	8.72	500	79.265
0.35	1.512	13	9.553	600	92.265
0.4	1.618	16	10.724	750	111.11
0.5	1.812	20	12.13	900	129.33
0.6	1.989	25	13.72	1000	141.2
0.75	2.228	30	15.172	1100	152.86
0.9	2.444	35	16.52	1300	175.68
1	2.578	40	17.784	1600	214.75
1.1	2.706	50	20.115	2000	266.45
1.3	2.946	60	22.246	2500	330.6
1.6	3.274	75	25.162	3000	394.32
2	3.667	90	27.828	3500	457.69
2.5	4.112	100	29.493	4000	520.8
3	4.506	110	31.086	5000	646.65
3.5	4.873	130	34.09		

Ջ^հ_{կ.մ.}-ի՝ աղյուսակում չներառված միջանկյալ արժեքները որոշելու համար Ջ^հ_{կ.մ.}-ի մոտիկ նշանակությունների միջև կիրառել գծային ինտերպոլացիա:

Եթե Պ_{կ.մ.} < 0.1 տ՝ Ջ^հ_{կ.մ.} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^հ_{կ.մ.} = 160.0 (հազ.դրամ/տ). Պ_{կ.մ.}(տ):

Եթե Պ_{կ.մ.} > 5000 տ՝ Ջ^հ_{կ.մ.} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^հ_{կ.մ.} = 2.586 (հազ.դրամ/տ). Պ_{կ.մ.}(տ):

ՆԱՎԹԱՍԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻՑ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _{նավթ} տոննա	Ջ ^գ _{նավթ} հազ. դրամ	Պ _{նավթ} տոննա	Ջ ^գ _{նավթ} հազ. դրամ	Պ _{նավթ} տոննա	Ջ ^գ _{նավթ} հազ. դրամ
		6	221	400	12600
0.1	20.7	7.5	260	450	14150
0.11	21.9	9	300	500	15700
0.13	23.5	10	328	550	17250
0.16	27	11	361	600	18800
0.2	30	13	424	650	20300
0.25	33.9	16	520	700	21800
0.3	38	20	647	750	23300
0.35	40.7	25	810	800	24800
0.4	44.7	30	965	900	27900
0.5	50.2	35	1125	1000	31000

0.6	55	40	1280	1100	34100
0.75	61.7	50	1595	1300	40300
0.9	69.2	60	1910	1500	46500
1	74	75	2380	1600	49600
1.1	77.8	90	2850	1800	55800
1.3	87.1	100	3165	2000	60200
1.6	96.9	110	3454	2500	77500
2	108.5	130	4110	3000	93000
2.5	123	160	5056	3500	108500
3	140	200	6315	4000	124000
3.5	151.55	250	7888	4500	139500
4	166	300	9460	5000	155000
5	193	350	11030		

Ջ^ա_{սալթ}-ի՝ աղյուսակում չներառված միջանկյալ արժեքների որոշման համար Ջ^ա_{սալթ}-ի մոտակա արժեքների միջև կիրառել ինտերպոլացիա:

Պ_{սալթ}<0.1 տ արժեքների դեպքում Ջ^ա_{սալթ} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝

Ջ^ա_{սալթ}=4140 (հազ.դրամ/տ). Պ_{սալթ}(տ):

Պ_{սալթ}>5000 տ արժեքների դեպքում Ջ^ա_{սալթ} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ/տ) հետևյալ բանաձևով՝

Ջ^ա_{սալթ}=620 (հազ.դրամ/տ). Պ_{սալթ}(տ):

Աղյուսակ N 9

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԱԿԹԱՄԹԵՐՔՆԵՐՈՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _{սալթ} տոննա	Ջ ^հ _{սալթ} հազ. դրամ	Պ _{սալթ} տոննա	Ջ ^հ _{սալթ} հազ. դրամ	Պ _{սալթ} տոննա	Ջ ^հ _{սալթ} հազ. դրամ
0.1	2.8	3.5	12.19	110	77.8
0.11	2.88	4	13.01	130	87.1
0.13	3.04	5	14.57	160	96.9
0.16	3.24	6	15.98	200	108.5
0.2	3.47	7.5	17.89	250	123
0.25	3.72	9	19.62	300	140
0.3	3.94	10	20.7	350	151
0.35	4.14	11	21.9	400	166
0.4	4.31	13	23.5	500	193
0.5	4.62	16	27	600	221
0.75	5.57	20	30	750	260
0.9	6.11	25	33.9	900	300
1	6.44	30	38	1000	328
1.1	6.76	35	40.7	1100	361
1.3	7.34	40	44.7	1300	424
1.6	8.18	50	50.2	1600	520
2	9.16	60	55	2000	648
2.5	10.26	75	61.7	2500	810
3	11.25	90	69.2	3000	965
		100	74	3500	1125
				4000	1280
				5000	1595

Աղյուսակում չներառված Ջ^հ_{սալթ}-ի միջանկյալ մեծությունը որոշելու համար Ջ^հ_{սալթ}-ի մոտիկ արժեքների միջև կիրառել ինտերպոլացիա:

Եթե Պ_{սալթ}<0.1 տ՝ վնասի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝ Ջ^հ_{սալթ}=560.0 (հազ.դրամ/տ). Պ_{սալթ}(տ):

Պ_{սսվթ}>5000 տ՝ Ջ^հ_{սսվթ} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^հ_{սսվթ}=638 (հազ.դրամ/տ). Պ_{սսվթ}(տ):

Աղյուսակ N 10

ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՂԵՐԻ, ՑԻԱՆԻ, ՊՂԻՆՁ, (ՔՐՈՍ VI), ՑԻՆԿ, ՖՏՈՐԻՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՍՏԱԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՀՈՍՔԻՑ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _ճ կգ. էկվ	Ջ ^գ հազ. դրամ	Պ _ճ կգ. էկվ	Ջ ^գ հազ. դրամ
3.75	30.57	40	191.13
4	32.49	50	232.14
5	40.03	60	273.14
6	47.34	75	334.65
7.5	57.87	90	396.15
9	64.02	100	437.16
10	68.12	110	478.16
11	72.22	130	560.17
13	80.42	145	621.67
16	97.72	165	703.68
20	109.12	180	748.39
25	129.63	200	808
30	150.13	220	867.61
35	170.63	247	949.58

Աղյուսակում չներառված Ջ^գ-ի միջնակա արժեքների որոշման համար կիրառել Ջ^գ մոտակա արժեքների ինտերպոլացիա:

Պ_ճ<3.75 կգ. էկվ-ի դեպքում Ջ^գ վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^գ=163.0 (հազ.դրամ/կգ. էկվ). Պ_ճ (կգ. էկվ):

Պ_ճ>247 կգ. էկվ-ի դեպքում Ջ^գ վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Ջ^գ=76.72 (հազ.դրամ/կգ. էկվ). Պ_ճ (կգ. էկվ):

Աղյուսակ N 11

ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՂԵՐԻ, ՑԻԱՆԻ, ՊՂԻՆՁ, (ՔՐՈՍ VI), ՑԻՆԿ, ՖՏՈՐԻՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԱՐՏԱՀՈՍՔԻՑ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _ճ կգ. էկվ	Ջ ^հ հազ. դրամ	Պ _ճ կգ. էկվ	Ջ ^հ հազ. դրամ
50	4.26	500	40.03
60	5.11	600	47.34
75	6.38	750	57.87
90	7.64	900	64.02
100	8.44	1000	68.12
110	9.31	1100	72.22
130	10.97	1300	80.42
160	13.44	1600	92.72
200	16.71	2000	109.12
250	20.74	2500	129.63
300	24.72	3000	150.13
350	28.59	3500	170.63
375	30.57	4000	191.13
400	32.49	5000	232.14

Աղյուսակում չներառված Q_{δ} -ի միջանկյալ մեծությունը որոշելու համար Q_{δ} -ի մոտիկ արժեքների միջև կիրառել ինտերպոլացիա:

Եթե $Q_{\delta} < 50$ կգ. էկվ՝ Q_{δ} վնասի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$Q_{\delta} = 1.72$ (հազ. դրամ/կգ. էկվ) $\cdot Q_{\delta}$ (կգ. էկվ):

Եթե $Q_{\delta} > 5000$ կգ. էկվ՝ Q_{δ} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ $Q_{\delta} = 0.92$

(հազ. դրամ/կգ. էկվ) $\cdot Q_{\delta}$ (կգ. էկվ):

Աղյուսակ N 12

ԴԵՏԵՐԳԵՆՏՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՀՈՍՔԻՑ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Q_{η} տոննա	Q_{η}^q հազ. դրամ	Q_{η} տոննա	Q_{η}^q հազ. դրամ	Q_{η} տոննա	Q_{η}^q հազ. դրամ
0.1	24	6	340	350	14355
0.11	25.6	7.5	407	400	16270
0.13	28.1	9	480	450	18165
0.16	30.8	10	529.1	500	20050
0.2	35.1	11	578.1	550	21925
0.25	40.1	13	667	600	23790
0.3	44.7	16	800	650	25640
0.35	49	20	981.8	700	27480
0.4	53	25	1210	750	29320
0.5	60.7	30	1436	800	31150
0.6	67.6	35	1659	900	34780
0.75	77.2	40	1880	1000	38390
0.9	86.1	50	2317	1100	41980
1	96.4	60	2749	1300	49090
1.1	97.9	75	3388	1500	56140
1.3	110.5	90	4020	1600	59640
1.6	126	100	4437	1800	66600
2	148.5	110	4850.5	2000	73.51
2.5	175	130	5674	2500	90610
3	200	160	6892.5	3000	107500
3.5	232.7	200	8496	3500	124200
4	245	250	10470	4000	140750
5	293.4	300	12420	4500	157200
				5000	173500

Q_{η} -ի՝ աղյուսակում չներառված միջնակա արժեքների որոշման համար խորհուրդ է տրվում կիրառել Q_{η} -ի մոտակա արժեքների ինտերպոլացիա:

$Q_{\eta} < 0.1$ տ արժեքների դեպքում Q_{η} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ $Q_{\eta} = 4800.0$ (հազ. դրամ/տ) $\cdot Q_{\eta}$ (տ):

$Q_{\eta} > 5000$ տ արժեքների դեպքում Q_{η} վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ $Q_{\eta} = 694.0$ (հազ. դրամ/տ) $\cdot Q_{\eta}$ (տ):

Աղյուսակ N 13

ԴԵՏԵՐԳԵՆՏՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՌՅԱԼ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Q_{η} տոննա	Q_{η}^h հազ. դրամ	Q_{η} տոննա	Q_{η}^h հազ. դրամ	Q_{η} տոննա	Q_{η}^h հազ. դրամ
0.1	3.28	3.5	14.54	111	97.9
0.11	3.4	4	15.5	130	110.5

0.13	3.63	5	17.24	160	126
0.16	3.94	6	18.81	200	148.5
0.2	4.29	7.5	20.92	250	175
0.25	4.68	9	22.82	300	200
0.3	5.02	10	24	350	232.7
0.35	5.33	11	25.6	400	245
0.4	5.61	13	28.1	500	293.4
0.5	6.12	16	30	600	340
0.6	6.56	20	35.1	750	407
0.75	7.16	25	40.1	900	480
0.9	7.68	30	44.7	1000	529.1
1	8	35	49	1100	578.1
1.1	8.37	40	53	1300	667
1.3	9.07	50	60.7	1600	800
1.6	10.01	60	67.6	2000	981.8
2	11.01	75	77.2	2500	1210
2.5	12.37	90	86.1	3000	1436
3	13.51	100	96.4	3500	1659
				4000	1880
				5000	2317

Չ^h_η-ի՝ աղյուսակում չներառված միջնակա արժեքների որոշման համար կիրառել Չ^h_η-ի մոտակա արժեքների ինտերպոլացիա:

Պ_η<0.1 տ արժեքների դեպքում Չ^h_η վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Չ^h_η=656.0 (հազ.դրամ/տ).Պ_η(տ):

Պ_η>5000 տ արժեքների դեպքում Չ^h_η վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Չ^h_η=9.2 (հազ.դրամ/տ).Պ_η(տ):

Աղյուսակ N 14

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐՈՎ ՀԱՄԱԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՀՈՍՔԻՑ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _բ տոննա	Չ ^գ _բ հազ. դրամ	Պ _բ տոննա	Չ ^գ _բ հազ. դրամ	Պ _բ տոննա	Չ ^գ _բ հազ. դրամ
		3.5	251.61	130	6980.5
0.1	27.116	4	277.81	160	8503.3
0.11	28.42	5	327.77	200	10512
0.13	31.107	6	375.3	250	12995
0.16	34.803	7.5	463.96	300	15454
0.2	39.267	9	551.74	350	17892
0.25	44.303	10	609.84	400	20313
0.3	48.892	11	667.65	500	25112
0.35	53.144	13	782.54	600	29862
0.4	57.524	16	953.26	750	36917
0.5	64.45	20	1178.4	900	43902
0.6	71.127	25	1456.8	1000	48525
0.75	80.25	30	1732.5	1100	53125
0.9	91.872	35	2005.8	1300	62261
1	99.342	40	2277.2	1600	75850
1.1	106.62	50	2815	2000	93768
1.3	120.68	60	3348.2	2500	115920
1.6	140.78	75	4138.6	3000	137850
2	166.13	90	4921.6	3500	159600

2.5	196.03	100	5440	4000	181200
3	224.43	110	5955.7	5000	224000
3.5	251.61	130	6980.5		

Չ_բ-ի՝ աղյուսակում չներառված միջնակա արժեքների որոշման համար կիրառել Չ_բ-ի մոտակա արժեքների գծային ինտերպոլացիա:

Պ_բ<0.1 տ արժեքների դեպքում Չ_բ վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Չ_բ=5425.2 (հազ.դրամ/տ).Պ_բ(տ):

Պ_բ>5000 տ արժեքների դեպքում Չ_բ վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Չ_բ=896.0 (հազ.դրամ/տ).Պ_բ(տ):

Աղյուսակ N 15

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱԽՅԱԼ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Պ _բ տոննա	Չ _բ հազ. դրամ	Պ _բ տոննա	Չ _բ հազ. դրամ	Պ _բ տոննա	Չ _բ հազ. դրամ
		3.5	16.166	130	120.68
0.1	3.63	4	17.265	160	140.78
0.11	3.766	5	19.271	200	166.13
0.13	4.016	6	21.083	250	196.03
0.16	4.35	7.5	23.532	300	244.43
0.2	4.741	9	25.744	350	251.61
0.25	5.166	10	27.116	400	277.81
0.3	5.542	11	28.42	500	327.77
0.35	5.881	13	31.107	600	375.3
0.4	6.191	16	34.803	750	463.96
0.5	6.746	20	39.267	900	551.74
0.6	7.237	25	44.303	1000	609.84
0.75	7.887	30	48.892	1100	667.65
0.9	8.46	35	53.144	1300	782.54
1	8.811	40	57.524	1600	953.26
1.1	9.14	50	64.45	2000	1178.4
1.3	9.924	60	71.127	2500	1456.8
1.6	10.993	75	80.25	3000	1732.5
2	12.27	90	91.872	3500	2005.8
2.5	13.696	100	99.342	4000	2277.2
3	14.983	110	106.62	5000	2815
3.5	16.166	130	120.68		

Աղյուսակում չներառված Չ_բ-ի միջնակա մեծությունը որոշելու համար խորհուրդ է տրվում Չ_բ-ի մոտակա արժեքների միջև կիրառել շարքային ինտերպոլացիա:

Եթե Պ_բ<0.1 տ՝ Չ_բ վնասի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝ Չ_բ=756.0 (հազ.դրամ/տ).Պ_բ(տ):

Եթե Պ_բ>5000 տ՝ Չ_բ վնասի մեծությունը որոշվում է (հազ. դրամ) հետևյալ բանաձևով՝ Չ_բ=11.26 (հազ.դրամ/տ).Պ_բ(տ):

Աղյուսակ N 16

ԼՈՂԱՑՈՂ ԱՂԲՈՎ ՋՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՍԱՆԴՂԱԿԸ

Գնահատականը բալերով	Ջրի մակերեսի արտաքին տեսքը
------------------------	----------------------------

0	Բաց ջրատարածության 100 քառ. մ ջրի մաքուր մակերեսի վրա երևում են աղբի առանձին ոչ մեծ կուտակումներ՝ 0.01 քառ. մ-ից ոչ ավելի ընդհանուր տարածքով:
1	100 քառ. մ բաց ջրատարածության վրա նկատվում են աղբի մեկ քառ. մ մակերեսից ոչ մեծ առանձին կուտակումներ՝ ցանկացած ուղղությամբ լողացող առանձին առարկաներ, որոնց մեծ կողմի մեծությունը չի գերազանցում 25 սմ-ն:
2	100 քառ. մ բաց ջրատարածության վրա նկատվում են աղբի կուտակումներ՝ 2 քառ. մ-ից ոչ ավելի մակերեսով, տարբեր ուղղություններով լողացող առանձին առարկաներ, որոնց մեծ կողմի մեծությունը չի գերազանցում 50 սմ-ն:
3	100 քառ. մ բաց ջրատարածության վրա նկատվում են 5 քառ. մ ընդհանուր տարածքով աղբի կուտակումներ՝ լողացող առանձին առարկաներ, որոնց մեծ կողմի մեծությունը չի գերազանցում 15 մետրը, աղբի կուտակումներ անկյուններում, փակուղիներում և նավամատույցի հողմակողմ կողմում՝ մինչև 0.5 մ աղտոտված հատվածով:
4	100 քառ. մ բաց ջրատարածության վրա նկատվում են աղբի կուտակումներ՝ մինչև 10 քառ. մ ընդհանուր տարածքով, բավական քանակությամբ առարկաներ, որոնց մեծ կողմի մեծությունը չի գերազանցում 1.5 մետրը, աղբի կուտակումներ անկյուններում, փակուղիներում, նավամատույցի հողմակողմ կողմում՝ մինչև 1 մ աղտոտված հատվածով:
5	100 քառ. մ բաց ջրատարածության վրա նկատվում են աղբի կուտակումներ՝ 10 քառ. մ-ից ավելի ընդհանուր տարածքով: Մեծ առարկաներ, որոնց մեծությունը գերազանցում է 1.5 մետրը, աղբի կուտակումներ անկյուններում, փակուղիներում և նավամատույցի հողմակողմ կողմում՝ մեկ մ-ից ավելի աղտոտված հատվածով:

(հավելվածը խմբ. 26.11.09 N 1416-Ն, 10.07.13 N 768-Ն, խմբ., փոփ, լրաց. 05.09.19 N 1176-Ն)